

Սպիտակ քաղաքի թիվ 2 մանկապարտեզի համար էներգախնայող լուսադիոդային լամպերի և էլեկտրական ջրատաքացուցիչների մատակարարում

Առաջադրանքի նկարագիր և մատակարարման պահանջներ

Կազմակերպությունը՝	«Հարիթաթ ֆոդ Հյումենիթի Արմենիա» հիմնադրամ
Ծրագրի անվանումը՝	Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում (ՎԱԷՀՔ)
Իրականացման վայրը՝	ՀՀ, Լոռու մարզ, ք. Սպիտակ, Թիվ 2 մանկապարտեզ

Աշխատանքների տևողությունը՝ 30 (երեսուն) օրացուցային օր
Իրականացման ժամանակահատվածը՝ Կսահմանվի ապրանքների մատակարարման պայմանագրով

1. Համառոտ ակնարկ

Սակավ էներգետիկ ռեսուրսներ ունեցող Հայաստանի համար բնակելի ու հասարակական շենքերի ձմեռային ջեռուցումների և ամառային հովացումների համար էներգախնայողական լուծումների կիրառումը խիստ արդիական խնդիր է: Նախնական դիտարկումները ցույց են տալիս, որ ջեռուցման ծախսերը գերազանցում են նրանց ընդհանուր էներգետիկ ծախսի 30%-ը, ինչը ներկա տնտեսական պայմաններում դրանց շահագործող բնակչության ու կազմակերպությունների մեծ մասի համար լուրջ խնդիրներ է ստեղծում:

Ասվածից հետևում է, որ հասարակական և բնակելի շենքերում էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների իրականացումը նպաստի այդ շենքերում ջերմային կորուստների նվազեցմանը, էներգակիրների ու ընդհանրապես կենցաղային էներգետիկ ծախսերի կրճատմանը և կապահովի ֆինանսատնտեսական լուրջ արդյունքներ:

2. ՎԱԷՀՔ ծրագրի ընդհանուր նպատակն ու խնդիրները

Ծրագրի ընդհանուր նպատակն է աջակցել Սպիտակի և Վայքի քաղաքապետարաններին՝ մշակելու և հանրային նշանակության ու բնակելի շենքերում փորձարկելու էներգախնայողության կիրառելի և արդյունավետ մոդելներ՝ էներգաարդյունավետության մեծացման առաջնահերթ որոշակի միջոցառումների իրականացմամբ և էներգիայի վերականգնվող աղբյուրների կիրառմամբ:

Ծրագրի նպատակներն են.

2.1.) Վայք և Սպիտակ քաղաքների 45 բնակելի և 2 հանրային շենքերում իրականացնել էներգաարդյունավետությանը նպաստող շինարարական աշխատանքներ (տանիքի վերակառուցում, վերնածածկի ու ջեռուցվող նկուղի պարագայում նաև նրա ծածկի, այսինքն առաջին հարկի հատակի ջերմամեկուսացում, պատուհանների և արտաքին դռների փոխում) և կիրառել էներգիայի վերականգնվող աղբյուրներ (արևային ֆոտովոլտայիկ մարտկոցների տեղադրում՝ ընդհանուր տարածքների լուսավորության համար, արևային ջրատաքացուցիչների տեղադրում՝ Սպիտակի մանկապարտեզում տաք ջրամատակարարման համար):

2.2.) էներգախնայողության, էներգիայի սպառման արդյունավետության հարցերով բարձրացնել հանրության իրազեկությունը և նպաստել դրանց նկատմամբ մարդկանց վարքագծի և վերաբերմունքի նորովի ձևավորմանը,

2.3.) Ընդլայնել քաղաքապետարանների կայուն էներգետիկ զարգացման ծրագրեր իրականացնելու կարողությունները:

3. Առաջադրանքի նպատակը

Առաջադրանքի նպատակն է Սպիտակ քաղաքի թիվ 2 մանկապարտեզին տրամադրել լուսադիոդային (LED) էներգախնայող լամպեր և էլեկտրական ջրատաքացուցիչներ, որի արդյունքում մանկապարտեզում կապահովվի զգալի էներգախնայողություն և ֆինանսական ծախսերի կրճատում:

4. Մատակարարվող ապրանքների ծավալը և մատակարարմանը ներկայացվող պահանջները

Մատակարարը պետք է Սպիտակի թիվ 2 մանկապարտեզի համար մատակարարի էներգախնայող լուսադիոդային (LED) լամպեր և/կամ էլեկտրական ջրատաքացուցիչներ՝ համաձայն ստորև ներկայացված ծավալների և տեխնիկական մասնագրերի:

##	Ապրանքի անվանումը	Քանակը (հատ)	Հզորությունը (Վտ)	Երկարությունը (մմ)	Մրցութային լոտի համարը
1	ԼԴ լուսատու	84	9	600	Լոտ 1
2	ԼԴ լուսատու	126	18	1200	Լոտ 1

Նվազագույն պահանջները T8 ԼԴ լուսատուների համար՝

- Լուսաարգասիք ≥ 80 Լմ/Վտ
- Գունափոխանցման գործակից (Ra) ≥ 80
- Գունային ջերմաստիճան՝ 4,000K
- Շահագործման ժամկետը $\geq 30,000$ ժ
- Աշխատանքային լարման տիրույթ՝ 190 – 260Վ
- Հաճախությունը՝ 50 – 60 Հց
- Երաշխիք՝ նվազագույնը 2 տարի (անսարք լուսատուն պետք է փոխարինվի նորով)
- Մատակարարին ծանուցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում)

##	Ապրանքի անվանումը	Քանակը (հատ)	Հզորությունը (Վտ)	Մրցութային լոտի համարը
1	Էլեկտրական ջրատաքացուցիչ	7	5.5	Լոտ 2

Նվազագույն պահանջները էլեկտրական ջրատաքացուցիչների համար՝

- Տեսակ՝ էլեկտրական ջրատաքացուցիչ, առանց կուտակիչ բաքի՝ ջերմաստիճանի կարգավորման վահանակով
- Հզորություն՝ 5.5 կՎտ
- Աշխատանքային լարման տիրույթ՝ 220 – 240Վ
- Նվազագույն հոսք՝ 0.3 գալոն/րոպե (կամ 1.14 լիտր/րոպե)
- Առավելագույն հոսք՝ 4.8 գալոն/րոպե (կամ 18.20 լիտր/րոպե)
- Հոսանքի մեծությունը՝ 25-29 A

Էներգաարդյունավետություն $\geq 99.5\%$

Երաշխիք՝ նվազագույնը 2 տարի (անսարք ջրատաքացուցիչը պետք է փոխարինվի նորով Մատակարարին ծանուցելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում)

Մատակարարմանը ներկայացվող պահանջներն են.

- Մպիտակի մանկապարտեզի համար մատակարարել վերը աղյուսակում նշված ապրանքները (լուսադիոդային լամպերը՝ ըստ Լոտ 1-ի և/կամ էլեկտրական ջրատաքացուցիչները՝ ըստ Լոտ 2-ի):
- Տալ երաշխիքային սպասարկման ժամկետ՝ լուսադիոդային լամպերի համար՝ երկու տարի, էլեկտրական ջրատաքացուցիչների համար՝ երկու տարի:
- Հանձնման պահին ապահովել ապրանքների տեխնիկական վիճակի ստուգումը և շահագործման համար պիտանիությունը:
- Ապրանքն ստացողներին տալ անհրաժեշտ տեխնիկական հրահանգներ մատակարարված լամպերի և ջրատաքացուցիչների տեղադրման, օգտագործման, շահագործման և պահպանման վերաբերյալ:
- Ապրանքների հանձնումը և ընդունումը ամրագրել համապատասխան ակտով՝ հաստատված հանձնող և ընդունող կողմերի ներկայացուցիչների ստորագրությամբ և կնիքով:

5. Մատակարարին ներկայացվող պահանջները

Մատակարարը պետք է ունենա նմանատիպ ապրանքներ մատակարարելու թույլտվություն (եթե այն պահանջվում է ՀՀ օրենքով), և նման ապրանքների մատակարարման առնվազն երկու տարվա փորձ:

6. Վճարման պայմանները

Վճարումը կկատարվի մատակարարի և ՀՖՀԱ-ի միջև կնքված պայմանագրով նախատեսված ապրանքների ամբողջական մատակարարումից հետո՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում՝ հանձնման-ընդունման ակտի և հաշիվ ապրանքագրի հիման վրա: Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ապրանքների մատակարարման հետ կապված խախտումների դեպքում կիրառվելիք տույժերը կսահմանվեն կողմերի միջև կնքվելիք մատակարարման պայմանագրով:

7. Քաղտնիությունը

Ծառայություն մատուցողն իրեն հասանելի դարձած ծրագրին և դրա մանդատին վերաբերող ցանկացած տեղեկություն պետք է պահի գաղտնի և այն չտրամադրի որևէ երրորդ կողմի, բացառությամբ, երբ այն կպահանջվի օրենքով: Այս պայմանը նաև գործում է պայմանագրի ավարտից հետո: